



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերական սեփականություն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 4 (32)

ՄԱՍ
ЧАСТЬ 1

Агентство интеллектуальной собственности
Республики Армения

**ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են
հրապարակված 2004 թվականի դեկտեմբերի 1-ից

Երեւան 2004

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ 1

ԳՅՈՒՏԵՐ	5, 117
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	7, 119
ՕԳՏԱԿԱՐ ՍՈԴԵԼՆԵՐ	23, 131
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	25, 133
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	27, 135
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	29, 137
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	33
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին	35
ՑՈՒՑԻՉՆԵՐ	105
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	109
ԵՐԿՏԱՐ ԿՈԴԵՐԸ	137

ՄԱՍ 2

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	5
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին	7

ՄԱՍ 3

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	5
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին	7

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

375010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. 563-258 отдел приема заявок
Тел. 561-126 отдел информационно-технологического
обеспечения

Internet: <http://www.armpatent.org>

E-mail: armpat@cornet.am

СОДЕРЖАНИЕ**ЧАСТЬ 1**

ИЗОБРЕТЕНИЯ	5, 117
Сведения о выданных патентах	7, 119
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	23, 131
Сведения о выданных патентах	25, 133
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ	27, 135
Сведения о выданных патентах	29, 137
ТОВАРНЫЕ ЗНАКИ	33
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	35
УКАЗАТЕЛИ	105
СООБЩЕНИЯ	109
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	137

ЧАСТЬ 2

ТОВАРНЫЕ ЗНАКИ	5
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	7

ЧАСТЬ 3

ТОВАРНЫЕ ЗНАКИ	5
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	7

CONTENTS**PART 1**

INVENTIONS
Information on granted patents
UTILITY MODELS
Information on granted patents
INDUSTRIAL DESIGNS
Information on granted patents
TRADE MARKS
Information on registered trade marks and service marks
INDEXES
REPORTS
TWO-LETTER CODES

PART 2

TRADE MARKS
Information on registered trade marks and service marks

PART 3

TRADE MARKS
Information on registered trade marks and service marks

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՄՅԿ ST.9 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը
	A1 Գյուտի հիմնական արտոնագիր
	A2 Գյուտի նախնական արտոնագիր
	B2 Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
24	արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնային հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
42	հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը
44	գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
45	գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	գյուտի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
65	հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը
71	հայտատուն, երկրի կոդը
72	գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 7 A01B 63/00 (11) 1524 (13) A2
(21) P20040016 (22) 05.02.2004
(42) 12.04.2004
(71) "Հայկական գյուղատնտեսական ակադեմիա"
պետական ոչ առետրային կազմակերպություն
(AM)
(72) Արշալույս Թարվերդյան (AM), Շավարշ
Գրիգորյան (AM), Պարգեւ Տոնապետյան (AM),
Արամայիս Եսոյան (AM), Աստղիկ Առաքելյան (AM)
(73) "Հայկական գյուղատնտեսական ակադեմիա"
պետական ոչ առետրային կազմակերպություն,
Երեւան, Տերյան 74 (AM)
(54) Լանջերում հողամշակ մեքենաների աշխա-
տանքային օրգանի խորության եւ ագրեգատի
ուղղության կայունության կարգավորման համա-
կարգ
(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական
մեքենաշինությանը, մասնավորապես՝ գյու-
ղատնտեսական մեքենաների կախովի համա-
կարգերին:

Համակարգն ունի շրջանակ, տրակտորին
հողակապորեն միացված եռակետ կախովի
մեխանիզմի լծակներ, դրանք բարձրացնող-
իջեցնող հարմարանք, որն ունի հիդրոգլան,
կարգավորվող լծակներ եւ ուղղիչ հիդրոգլան:
Մեքենայի շրջանակի դիրքը կարգավորվում
է էլեկտրամեխանիկական շարժահաղորդի
օգնությամբ, որը կազմված է երկու էլեկտրա-
մագնիսներից եւ նրանց խորիսխների միջեւ
տեղակայված լծակից: Լծակը հողակապված է
ուղղիչ հիդրոգլանի յուղի բաշխիչի մխոցակոթի
հետ:

Ավտոմատացվում է լանջերում հողամշակ
մեքենաների շրջանակի դիրքի կարգավորումը,
2 նկ.:

(51) 7 A01K 47/00 (11) 1525 (13) A2
(21) P20040051 (22) 14.04.2004
(42) 11.06.2004
(71) Մուրադ Սահակյան (AM)
(72) Մուրադ Սահակյան (AM)
(73) Մուրադ Սահակյան, Եղեգնաձոր, Միկոյան
16, բն. 18 (AM)
(54) Սահակյանի փեթակ
(57) Գյուտը վերաբերում է մեղվաբուծությանը:

Փեթակն ունի եռաշերտ պանելներից
պատրաստված հատակով եւ կողային, հե-
տեւի, ճակատային պատերով ու տանիքով
ուղղանկյուն զուգահեռանիստի տեսքով իրան,
օդափոխման անցքերով եւ գործվածքե բարձով
ենթատանիք: Իրանի կողային պատերին
զուգահեռ տեղադրված են մեղրաբջջային
շրջանակներ, հատակին տեղադրված է ջերմա-
կարգավորիչով հարթ էլեկտրատաքացիչ, իսկ
հետեւի պատում տեղադրված է կերատաշտ՝
կերի լցման անցքով: Ենթատանիքի պատին
տեղադրված է օդափոխիչ, իսկ օդափոխման
անցքերը գտնվում են օդափոխիչի դիմացի
պատին: Եռաշերտ պանելների միջանկյալ
շերտերը խեժով տոգորված թղթե խորիսխներ
են: Կերատաշտն ունի կերի առկայության ցուցիչ:
Պանելների արտաքին պատերը պատրաստված
են կիսաթափանցիկ նյութից, իսկ գործվածքե
բարձը՝ խոնավությունը միայն մի ուղղությամբ՝
փեթակից դուրս բաց թողնող գործվածքից:

Ապահովվում է ամբողջ տարվա ընթացքում
մեղուների համար բարենպաստ պայմաններ
ստեղծելու հնարավորությունը, 4 նկ.:

(51) 7 A24D 1/08 (11) 1526 (13) A2
 (21) P20040009 (22) 22.01.2004
 (42) 12.04.2004
 (71) Մանուկ Մարգարյան (AM)
 (72) Մանուկ Մարգարյան (AM)
 (73) Մանուկ Մարգարյան, Երեւան, Վրթ. Փա-
 փազյան, 2-րդ նրբ. 133 (AM)
 (54) Ինքնայրվող սիգարետ
 (57) Գյուտը վերաբերում է ծխախոտային ար-
 դյունաբերությանը:

Սիգարետն ունի թղթե փաթաթվածքում
 ամփոփված ծխախոտային ու զտող մասեր:
 Ծխախոտային մասի վերջնամասը ներծծված է
 այրվող նյութով, իսկ դրա թղթե փաթաթվածքի
 ծայրամասը պատված է շփումաբոցավառիչ
 տարրերով: Սիգարետի ծխախոտային մասը
 ներդրված է թղթե պատյանում, որի ներքին
 մակերեսույթի միջնամասը պատված է նյութով,
 որը շփման արդյունքում բռնկում է առաջացնում:
 Սիգարետը տուփից հանելիս շփումաբոցավառիչ
 տարրերը շփվում են այդ նյութի հետ, եւ սիգարետի
 այրվող նյութով ներծծված ծխախոտային մասը
 բռնկվում է:

Ապահովվում է առանց լրացուցիչ վառիչների
 սիգարետ վառելը, 4 նկ.:

(51) 7 A61B 17/00 (11) 1527 (13) A2
 A61B 1/30
 (21) P20040029 (22) 02.03.2004
 (42) 11.05.2004
 (71) Արմեն Սինասյան (AM), Արարատ Դավթյան
 (AM), Արա Սինոնյան (AM)
 (72) Արմեն Սինասյան (AM), Արարատ Դավթյան
 (AM), Արա Սինոնյան (AM)
 (73) Արմեն Սինասյան, Երեւան, Աղայան 11, բն.9
 (AM), Արարատ Դավթյան, Երեւան, Զորավար
 Անդրանիկի թաղ., Բ-2 զանգվ. 121, բն.10
 (AM), Արա Սինոնյան, Երեւան, Նոր Նորքի 5-րդ
 միկրոշրջան, Մառի 23, բն.15 (AM)
 (54) Սուր հաստաղիքային արյունահոսությունների
 ժամանակ անհետաձգելի կոլոնոսկոպիայի
 եղանակ

(57) Սուր հաստաղիքային արյունահոսությունների
 ժամանակ կատարում են անհետաձգելի կոլո-
 նոսկոպիա՝ առանց հաստ աղու նախնական
 մեխանիկական մաքրման: Լրացուցիչ՝ կոլ-
 ոնոսկոպի հետ միաժամանակ աղու լուսանցք
 են մտցնում Դեննիսի զոնդը, որի միջոցով
 կոլոնոսկոպի ներմղելուն զուգահեռ կատարում
 են աղու լվացումը: Կոլոնոսկոպիայից եւ արյու-
 նահոսության աղբյուրի հայտնաբերելուց հետո
 կատարում են արյունահոսության էնդոսկոպիկ
 դադարեցման համապատասխան միջոցառումներ,
 որոնցից հետո կոլոնոսկոպը դուրս են բերում՝
 աղու լուսանցքում արյունահոսության աղբյուրից
 պրոքսիմալ թողնելով զոնդը, մինչեւ 2-3 օր
 ժամկետով:

Բարձրացվում է կոլոնոսկոպիայի ախտորոշիչ
 արդյունավետությունը:

(51) 7 A61B 17/00 (11) 1528 (13) A2
 (21) P20040017 (22) 05.02.2004
 (42) 12.04.2004
 (71) Յուրի Պողոսյան (AM), Հայկ Ենոքյան (AM)
 (72) Յուրի Պողոսյան (AM), Հայկ Ենոքյան (AM)
 (73) Յուրի Պողոսյան, Երեւան, Սունդուկյան 3ա,
 բն.17 (AM), Հայկ Ենոքյան, Երեւան, Նոր Նորքի
 5-րդ միկրոշրջան, Գալշոյան 55/12, բն.1ա (AM)
 (54) Քունք-ստործնոտային հողի ցավային
 դիսֆունկցիայի բուժման եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է բժշկությանը եւ կարող
 է կիրառվել դիմածնոտային վիրաբուժության
 մեջ քունք-ստործնոտային հողի ցավային դիս-
 ֆունկցիայի բուժման համար:

Տեղային ներսփռական անզգայացման
 պայմաններում կատարում են 1,5-2,0 սմ
 երկարությամբ ուղղահայաց կտրվածք՝ նա-
 հանջելով վերին ութերորդ ատամից հետ
 0,5-1,0սմ մինչեւ թեւակերպ ելունի արտաքին
 թիթեղի ստորին եզրը, ապա վերջինիս եզրով
 կատարում են հորիզոնական կտրվածք՝ մոտա-
 վորապես 1,0-1,5սմ երկարությամբ դեպի հետ:
 Շերտազատիչի օգնությամբ անջատելով լոր-

ծաթադանթավերնոսկրային լաթը, մերկացնում են թեւակերպ ելունի արտաքին թիթեղի դրսային մակերեսույթը: Թիթեղի եզրի շրջանում եւ նրա ներսային մակերեսույթից անջատում են թեւակերպ մկանների մկանաթելերը: Մերկացված կողմնային թիթեղը ոսկրակրծիչով հատում են, իսկ հատված եզրը հարթեցնում: Վերքը լվանում են հականեխիչներով, տեղադրում լորձաթաղանթավերնոսկրային լաթը եւ կարում հանգուցակարերով:

Կանխվում է թեւակերպ կողմնային մկանի հնարավոր տրորումը:

(51) 7 A61B 17/00 (11) 1529 (13) A2
(21) P20040018 (22) 05.02.2004
(42) 12.04.2004
(71) Յուրի Պողոսյան (AM), Աննա Պողոսյան (AM),
Լեւոն Գալստյան (AM)
(72) Յուրի Պողոսյան (AM), Աննա Պողոսյան (AM),
Լեւոն Գալստյան (AM)
(73) Յուրի Պողոսյան, Երեւան, Սունդուկյան 29,
բն. 3 (AM), Աննա Պողոսյան, Երեւան, Նալբանդյան
25/14, բն. 104 (AM), Լեւոն Գալստյան, Երեւան,
Սարմենի 92, բն.31 (AM)
(54) Պարօդոնտի հիվանդությունների բուժման
եղանակ
(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մաս-
նավորապես՝ պարօդոնտի հիվանդությունների
տեղային բուժման եղանակներին:

Հայտարկվում է պարօդոնտի հիվանդու-
թյունների բուժման եղանակ՝ օգտագործելով
բաղադրանյութ, որը պարունակում է ակնա-
մոմ եւ չիչխանի յուղ՝ վերցված 1,0:(0,8-1,0)
հարաբերակցությամբ: Ընդ որում, բաղադրա-
նյութը օգտագործում են քսուքի կամ լնդային
վիրակապի ձեւով: Կրճատվում է բուժման
տեւողությունը եւ երկարաձգվում ռեմիսիայի
ժամկետը:

(51) 7 A61B 17/58 (11) 1530 (13) A2
(21) P20040047 (22) 12.04.2004
(42) 11.05.2004
(71) Արմենակ Ռաֆայելյան (AM)
(72) Արմենակ Ռաֆայելյան (AM)
(73) Արմենակ Ռաֆայելյան, Երեւան, Աղայան 9,
բն. 29 (AM)
(54) Ազդոսկրի պրոկսիմալ հատվածների օստեո-
սինթեզի ապարատ
(57) Գյուտը վերաբերում է բժշկության տեխնի-
կային, մասնավորապես՝ վիրաբուժությանը եւ
կարող է կիրառվել վնասվածքաբանության մեջ
կոտրվածքների բուժման համար:

Ապարատն ունի բազային հարթակ եւ
ուղղորդիչ: Ուղղորդիչը գլանաձեւ է, ունի երկայ-
նական ուղղահայաց միստեր, ձողի համար
նախատեսված երկայնական միջանցիկ անցք
եւ շրջանագծով հավասարաչափ դասավորված
երեք երկայնական միջանցիկ անցք՝ ներոսկրային
ծողերի համար: Ուղղորդիչի յուրաքանչյուր միստի
վրա ամրացված է մանեկներով երկուական
պտուտակային մատ: Բազային հարթակն ունի
իր սիմետրիկ առանցքի նկատմամբ սիմետրիկ
դասավորված երկու զուգահեռ՝ կենտրոնական
եւ 75 աստիճան անկյան տակ երկու կողմնային
բացվածքներ: Կենտրոնական բացվածքներում
տեղադրված են երկուական պարուրակային
ծողեր, որոնց գլխիկները հողակապորեն նստեց-
ված են ուղղորդիչի պտուտակային մանեկների
վրա, իսկ կողմնային բացվածքներում՝ ներոսկ-
րային ծողերի ձողակալներ:

Ապահովվում է կայուն սեւեռում, ստեղծվում է
չափավորված դինամիկ ճնշում ոսկրաբեկորների
միջեւ, 4 նկ.:

(51) 7 B05C 5/04 (11) 1531 (13) A2
(21) P20040050 (22) 14.04.2004
(42) 11.05.2004 (71) Ալեքսանդր Նիկողոսյան
(AM)
(72) Ալեքսանդր Նիկողոսյան (AM)

(73) Ալեքսանդր Նիկողոսյան, Երեւան, Տպագրիչների 9, բն. 12 (AM)

(54) Պոլիմերային կապակցանյութով սոսնձապատման հարմարանք

(57) Հարմարանքն ունի տաքացիչ, հաջորդաբար տեղակայված մատուցման ականոց, կիզակետող ականոց եւ ծայրափողակ: Մատուցման ականոցի անցքն ունի գլանաձեւ եւ կոնական հատվածներ: Կոնական հատվածում տեղակայված է դիաֆրագմա ունեցող կոնական ներդիր, որն իր հիմքով ուղղված է դեպի կիզակետող ականոցը: Տաքացիչը էլեկտրական է եւ իրականացված է խողովակի տեսքով, որի անցքում տեղակայված են մատուցման ու կիզակետող ականոցները եւ ծայրափողակը: Մատուցման ականոցի անցքի կոնական հատվածի երկարությունը կազմում է ականոցի երկարության մոտավորապես 1/3-ը: Կապակցանյութը հարմարանքի մուտքին տրվում է դիսպերսային փոշու տեսքով: Մատուցման ականոցը տաքացվում է մինչեւ տեխնոլոգիական ջերմաստիճանը: Կապակցանյութն անցնում է մատուցման ականոցի եւ կոնական ներդիրի տարածքով, մտնում է կիզակետող ականոցի գոտի եւ հալված կաթիլների տեսքով արտահոսում տակդիրի վրա:

Բարձրացվում է արտադրողականությունը, պարզեցվում կոնստրուկցիան, 1 նկ.:

(51) 7 B23B 27/00 (11) 1532 (13) A2

(21) P20040046 (22) 09.04.2004

(42) 11.06.2004

(71) Հենրիկ Բաղդասարյան (AM), Հենրիկ Բարսեղյան (AM)

(72) Հենրիկ Բաղդասարյան (AM), Հենրիկ Բարսեղյան (AM), Վահե Բաղդասարյան (AM), Նարինե Բաղդասարյան (AM)

(73) Հենրիկ Բաղդասարյան, Երեւան, Ավանի 3-րդ փող. Չարենցի թաղ. 10, բն. 25 (AM), Հենրիկ Բարսեղյան, Երեւան, Գարեգին Նժդեհի 30/3, բն. 31 (AM)

(54) Կտրող գործիքի օպտիմալ երկրաչափական պարամետրերի որոշման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես՝ մետաղամշակմանը:

Ըստ եղանակի փորձարկման համար ցանկացած մակնիշի մշակվող նյութից պատրաստում են գլանաձեւ նմուշ, նմուշը ձգում են մինչեւ դրա խզվելը, չափում են նմուշի ծնիչի հետագծի ու ձգման հետեւանքով առաջացած կոնական թեք մակերեսների ծնիչով կազմված անկյունը եւ նմուշի ձգման հետեւանքով առաջացած կոնի փոքր (խզման տեղամասի) տրամագիծը, որոնցից կախված, ըստ բանաձեւերի որոշում են կտրող գործիքի կտրող եզրի առջեւի եւ հետեւի անկյունները:

Պարզեցվում է օպտիմալ անկյունների որոշումը, 3 նկ.:

(51) 7 B23K 20/14 (11) 1533 (13) A2

(21) P20040041 (22) 24.03.2004

(42) 11.05.2004

(71) Վարդան Ավագյան (AM)

(72) Վարդան Ավագյան (AM)

(73) Վարդան Ավագյան, Երեւան, Հալաբյան 22ա, բն.39 (AM)

(54) Նրբաթիթեղի եւ մետաղյա դետալի դիֆուզային եռակցման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է դիֆուզային եռակցմանը, մասնավորապես՝ նրբաթիթեղի եւ մետաղյա դետալի դիֆուզային եռակցման եղանակներին եւ կարող է օգտագործվել ռադիոտեխնիկական, էլեկտրոնային եւ սարքաշինության արդյունաբերությունում:

Համաձայն եղանակի նրբաթիթեղը նախապես տեղադրում են դետալի եռակցվող մակերեսներից 6 սմ-ից ավելի հեռավորության վրա, ստեղծում են վակուում, դետալը ինդուկտորով տաքացնում են մինչեւ եռակցման համար նպաստավոր ջերմաստիճանը, տաքացումը դադարեցնում են, ապա նրբաթիթեղը սեղմում են դետալին:

Բարձրացվում է եռակցման որակը, 1 նկ.:

(51) 7 B23K 20/26 (11) 1534 (13) A2
 (21) P20040052 (22) 20.04.2004
 (42) 11.06.2004
 (71) Վարդան Ավագյան (AM)
 (72) Վարդան Ավագյան (AM)
 (73) Վարդան Ավագյան, Երեւան, Հայաստանի Հանրապետություն, 39 (AM)
 (54) Երկարաչափ առարկաների դիֆուզային եռակցման սարք
 (57) Գյուտը վերաբերում է դիֆուզային եռակցման սարքերին, մասնավորապես՝ երկարաչափ առարկաների դիֆուզային եռակցման սարքերին եւ կարող է կիրառվել ռադիոտեխնիկական, էլեկտրոնային եւ սարքաշինության արդյունաբերությունում:

Սարքն ունի վակուումային համակարգ, եռակցվող դետալներին համառոտացնող սիլիցոնի տեսքով գլանային մակերեսային ունեցող վակուումային խուց, որն ապահովում է վակուում միայն եռակցվող դետալների կցվածքի գոտում, ինդուկտոր եւ սեղմման մեխանիզմ: Սարքն ունի նաեւ փշովի ռետինե դողերի տեսքով բռնիչներ, որոնք տեղադրված են վակուումային խցի երկու հակադիր կողմերում, մետաղյա օդակաձեւ թմբուկների մեջ:

Բարձրացվում է եռակցման որակը, 1 նկ.:

(51) 7 B23K 20/26 (11) 1535 (13) A2
 (21) P20040037 (22) 16.03.2004
 (42) 11.05.2004
 (71) Վարդան Ավագյան (AM)
 (72) Վարդան Ավագյան (AM)
 (73) Վարդան Ավագյան, Երեւան, Հայաստանի Հանրապետություն, 39 (AM)
 (54) Տեղակայման սարք դիֆուզային եռակցման համար
 (57) Գյուտը վերաբերում է տաքացնելով ճնշմամբ մետաղների մշակման սարքավորումներին, մասնավորապես՝ դիֆուզային եռակցման համար նախատեսված տեղակայման սարքերին եւ կարող է օգտագործվել ռադիոտեխնիկական, էլեկտրոնային եւ սարքաշինության արդյունաբերությունում:

նաբերությունում խողովակաձեւ նախապատրաստվածքների պատրաստման համար:

Սարքն ունի պահունակ, որն իրականացված է մետաղալարե պարույրի տեսքով եւ թիթեղով օժտված եռակցվող ողնակ: Մետաղալարե պարույրի ծայրերը ամրակցված են ողնակի վրա, ընդ որում մետաղալարե պարույրի ջերմային ընդարձակման գործակիցը փոքր է, քան թիթեղի եւ ողնակի ջերմային ընդարձակման գործակիցները:

Բարձրացվում է եռակցման որակը, 2 նկ.:

(51) 7 C01B 33/12 (11) 1536 (13) A2
 (21) P20030159 (22) 22.12.2003
 (42) 11.03.2004
 (71) «ՀՀ ԳԱԱ Ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
 (72) Նշան Զուլումյան (AM), Էմմա Հովհաննիսյան (AM), Զարուհի Հովհաննիսյան (AM), Սոնա Ղազարյան (AM)
 (73) «ՀՀ ԳԱԱ Ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Արդյունաբերության փող. 2-րդ նրբ. 10 (AM)
 (54) Սերպենտինիտի մշակման եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է անօրգանական քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ սերպենտինիտի մշակման եղանակներին եւ կարող է կիրառվել լուծելի սիլիկատների եւ կարմիր գունանյութի արտադրության մեջ:

Սերպենտինիտը մշակում են երկաթի (III) քլորիդի 1,2-2,0%-անոց լուծույթով 70-80°C ջերմաստիճանում, սերպենտինիտ : լուծույթ = 1:(3,2-3,8) զանգվ.հարաբերակցությամբ, ապա շիկացնում 560-580°C ջերմաստիճանում, որից հետո մշակում 4-10%-անոց աղաթթվով 80-90°C ջերմաստիճանում, քանում ապարախյուսը եւ առանձնացնում սիլիկատները զուլ-ժել տեսքով: Նստվածքը, որն իրենից ներկայացնում է երկաթ պարունակող կարմիր գունանյութ, չորացնում են 160-200°C ջերմաստիճանում:

Ապահովվում է անթափոփ, էկոլոգիապես մաքուր արտադրություն:

-
- (51) 7 C01B 33/24 (11) 1537 (13) A2
(21) P20040026 (22) 20.02.2004
(42) 11.05.2004
(71) Աննա Խաչատրյան (AM), Գագիկ Գրիգորյան (AM), Կարեն Գրիգորյան (AM), Օֆելյա Գրիգորյան (AM), Ասյա Ազնաուրյան (AM)
(72) Աննա Խաչատրյան (AM), Գագիկ Գրիգորյան (AM), Կարեն Գրիգորյան (AM), Օֆելյա Գրիգորյան (AM), Ասյա Ազնաուրյան (AM)
(73) Աննա Խաչատրյան, Երեւան, Մանանդյան 1, բն. 3 (AM), Գագիկ Գրիգորյան, Երեւան, Կոմիտասի 25, բն. 43 (AM), Կարեն Գրիգորյան, Երեւան, Կոմիտասի 25, բն. 43 (AM), Օֆելյա Գրիգորյան, Երեւան, Կոմիտասի 35, բն. 21 (AM), Ասյա Ազնաուրյան, Երեւան, Կոմիտասի 56, բն. 47 (AM)
(54) Վոլաստոնիտի ստացման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է անօրգանական քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ վոլաստոնիտի ստացման եղանակներին եւ կարող է կիրառվել կերամիկայի, ձայնամեկուսիչ սալիկների, պոլիմերների եւ ներկերի արտադրության մեջ:
Սիլիցիում եւ կալցիում պարունակող ելանյութերը ենթարկում են բարձրաջերմաստիճանային թրծման 1200°C ջերմաստիճանում 1-4 ժամվա ընթացքում, ընդ որում որպես սիլիցիում պարունակող ելանյութ վերցնում են դիատոմիտ, որպես կալցիում պարունակող ելանյութ՝ կրափոշի:

Պարզեցվում է եղանակը եւ բարձրանում արգասիքի ելքը:

-
- (51) 7 C02F 1/28 (11) 1538 (13) A2
(21) P20040030 (22) 03.03.2004
(42) 12.04.2004
(71) «Հայաստանի պետական ճարտարագիտա-

կան համալսարան» պետական ոչ առետրային կազմակերպություն (AM)

(72) Կարապետ Թահմազյան (AM), Գագիկ Վարդերեսյան (AM), Արթուր Մինասյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առետրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Նավթանյութեր պարունակող հոսքաջրերի մաքրման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է բնապահպանության բնագավառին:

Հոսքաջրերը ենթարկում են մաքրման կլանիչով՝ Կատամին-ԱԵ-18-ով մոդիֆիկացված փքած պեռլիտով: Ապահովվում է մաքրման բարձր արդյունավետություն, 3 նկ.:

-
- (51) 7 C02F 1/62 (11) 1539 (13) A2
C02F 1/463
(21) P20040033 (22) 09.03.2004
(42) 11.05.2004
(71) Գրիգորի Այվազյան (AM), Գարիկ Կարապետյան (AM)
(72) Գրիգորի Այվազյան (AM), Գարիկ Կարապետյան (AM)
(73) Գրիգորի Այվազյան, Երեւան, Դ. Անհաղթի 18, բն. 32 (AM), Գարիկ Կարապետյան, Վայոց Ձորի մարզ, գյուղ Գնդեվազ (AM)
(54) Արսենի իոններից բնական ջրերի եւ հոսքաջրերի մաքրման եղանակ
(57) Արսեն պարունակող բնական ջրերը եւ հոսքաջրերը մաքրում են արսենի իոններից գալվանավերականգնման մեթոդով՝ պղնձից եւ ածխից կազմված գալվանական զույգի կիրառմամբ: Հոսքաջրերը 5-15 րոպեի ընթացքում անց են կացնում պղնձի եւ ածխի մասնիկներով լցված աշտարակով, ընդ որում պղինձ:ածուխ զանգվածային հարաբերակցությունը (2,0-2,5:1) է:
Պարզեցվում է եղանակը եւ կրճատվում գործընթացի տեւողությունը:

(51) 7 C07D 239/24 (11) 1540 (13) A2
C07D 239/30
C07D 285/125
A01N 43/54

(21) P20040045 (22) 06.04.2004
(42) 11.06.2004

(71) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Վռամ Դովլաթյան (AM), Տաիրա Պապոյան (AM), Սիրանուշ Հարությունյան (AM), Մարգարիտա Դովլաթյան (AM), Շահանե Հարությունյան (AM), Ռոբերտ Առաքելյան (AM)

(73) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Ֆունգիցիդային ակտիվություն ունեցող 2-քլոր-4-(4-մեթիլ-5-թիոքսո-1,3,4-թիոդիազոլիլ-2)-թիո-6-մեթիլպիրիմիդին

(57) 2,4-երկքլոր-6-մեթիլպիրիմիդինը լուծույթում են ացետոնում, լուծույթին ավելացնում են 2-մերկապտո-4-մեթիլ-5-թիոքսո-1,3,4-թիոդիազոլի նատրիումական աղը, որը լուծված է ացետոնի եւ ջրի խառնուրդում:

Ընդլայնվում է ֆունգիցիդային ակտիվություն ունեցող միացությունների տեսականին:

(51) 7 C07D 263/20 (11) 1541 (13) A2
(21) P20040022 (22) 06.02.2004
(42) 11.06.2004

(71) «Երեւանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Էվելինա Մեսրոպյան (AM), Աիդա Ավետիսյան (AM), Արմեն Գալստյան (AM)

(73) «Երեւանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Ալեք Մանուկյան 1 (AM)

(54) 5-Մեթիլ-2-օքսազոլիդոնի ածանցյալի ստացման եղանակ

(57) Ֆենիլզլիցիդիլեթերը էթանոլի միջավայրում ենթարկում են փոխազդեցության միզանյութի հետ՝ 2,5:1 զանգվածային հարաբերակցությամբ:

Ընդլայնվում է եղանակի տեխնիկական հնարավորությունը՝ ստացվում է 5-մեթիլ-2-օքսազոլիդոնի նոր ածանցյալ, որն ունի ցավազրկող եւ հակամանրէային հատկություններ:

(51) 7 C09K 17/00 (11) 1542 (13) A2
E02D 3/02

(21) P20030148 (22) 08.12.2003
(42) 11.02.2004

(71) Մեժլուն Երիցյան (AM)

(72) Արման Նորավյան (AM), Ռայա Քարամյան (AM)

(73) Մեժլուն Երիցյան, Երեւան, Թոթովենցի 6/1, բն.17 (AM)

(54) Գրունտների միջով ջրի ծծանցման կանխման բաղադրանյութ

(57) Բաղադրանյութը ներառում է ակրիլաթթվի, դրա նատրիումական աղի, ակրիլամիդի եւ 1,3 երկակրիլամիդիլմեթիլիզոցիանուրատի համապոլիմեր, մոնոմորիլոնիտային տիպի կավ, ДФ 47/7С մակնիշի պոլիվինիլացետատային ջրային դիսպերսիա եւ ջուր, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %).

համապոլիմեր	0,7-1,0
մոնոմորիլոնիտային	
տիպի կավ	10,0-14,2
պոլիվինիլացետատային	
ջրային դիսպերսիա	1,7- 2,5
ջուր	83,4-86,5:

Բարձրանում են բաղադրանյութի ֆիզիկա-մեխանիկական հատկությունները՝ էլաստիկությունը, դեֆորմացիաների նկատմամբ կայունությունը:

(51) 7 C11B 1/10 (11) 1543 (13) A2
A61K 35/78
(21) P20040012 (22) 26.01.2004
(42) 11.05.2004
(71) Համլետ Միրզոյան (RU), Միքայել Ղազարյան (AM), Աշոտ Սահրատյան (RU)
(72) Համլետ Միրզոյան (RU), Միքայել Ղազարյան (AM)
(73) Համլետ Միրզոյան (RU), Միքայել Ղազարյան (AM), Աշոտ Սահրատյան (RU)
(54) Չիչխանի պտուղների համակոդմանի մշակման եղանակ
(57) Չիչխանի պտուղները պահում են էթիլային սպիրտում, ապա անջատում սպիրտային լուծամզուքը, պտուղները լվանում ջրով եւ անջատում ջրային լուծամզուքը, որից հետո պտուղները տրորում են՝ անցկացնելով հյութամզիչով, ստացված պտղամիսը եւ սերմերը առանձնացնում են իրարից, չորացնում, մամլում պտուտակակրիչային մամլիչով եւ դրանցից արտազատում չիչխանի յուղ, տանին, բարձրագույն ճարպաթթուներ, ներկեր:
Պարզեցվում է պրոցեսը, բարձրանում չիչխանի յուղի ելքն ու որակը, ապահովվում է յուղում պտղի բոլոր բաղադրիչների առկայությունը, ընդլայնվում անջատվող նյութերի տեսականին:
(74) Ն. Թումանյան

(51) 7 C23C 22/07 (11) 1544 (13) A2
(21) P20040001 (22) 12.01.2004
(42) 11.03.2004
(71) «ՀՀ ԳԱԱ Ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(72) Վլադիմիր Օվչիյան (AM), Ջարուհի Աթանեսյան (AM)
(73) «ՀՀ ԳԱԱ Ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Արդւթյան փող. 2-րդ նրբ. 10 (AM)
(54) Կոռոզիայի ենթարկված մետաղական մակերեսները մշակելու լուծույթ

(57) Լուծույթը ներառում է ֆոսֆորական թթու, միզանյութ, անցումային մետաղների՝ նիկելի կամ կոբալտի աղ, ֆուրֆուրոլ, ալյումինի հիդրօքսիդ եւ օրգանական լուծիչ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %).

ֆոսֆորական թթու	30,0-40,0
միզանյութ	2,0-4,0
անցումային	
մետաղների աղ	0,3-0,6
ֆուրֆուրոլ	0,3-0,6
ալյումինի հիդրօքսիդ	0,3-0,6
օրգանական լուծիչ	մնացածը:

Բարձրանում է լուծույթի արդյունավետությունը եւ դրանով մշակած մետաղական մակերեսների պաշտպանիչ հատկությունները:

(51) 7 C23F 11/04 (11) 1545 (13) A2
(21) P20030151 (22) 09.12.2003
(42) 11.02.2004
(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(72) Կարապետ Թահմազյան (AM), Գեղեցիկ Հովհաննիսյան (AM), Վիկտոր Բախտանյան (AM), Գեորգ Գեորգյան (AM)
(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)
(54) Պողպատի թթվային կոռոզիայի արգելակիչ
(57) Գյուտը վերաբերում է թթվային միջավայրում պողպատե սարքավորումը կոռոզիայից պաշտպանելու արգելակիչներին:

Արգելակիչը պարունակում է հետեւյալ բաղադրամասերը՝ զանգվ.%, 3-քլոր-2-բուտենիլ-քինոլինիումի քլորիդ՝ 28-42, 3-քլոր-2-բուտեն-1-ոլ՝ 8-16, պղնձի(I) յոդիդ՝ 0,5-3 եւ ջուր՝ մնացածը:

Ընդլայնվում է պողպատի թթվային կոռոզիայի արգելակիչների տեսականին:

(51) 7 C25B 11/10 (11) 1546 (13) A2
(21) P20030143 (22) 24.11.2003
(42) 12.04.2004
(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն(AM)
(72) Լազար Սարգսյան (AM), Մարտին Մարտիրոսյան (AM)
(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Չլուծվող անոդի ստացման եղանակ
(57) Ըստ չլուծվող անոդի ստացման եղանակի տիտանե տակդիրի եւ գալվանապատման եղանակով նստեցրած կապարի երկօքսիդ շերտի միջեւ էլեկտրոլիտային եղանակով 40 գ/լ AgCN, 40 գ/լ KCN, 10գ/լ KOH եւ 40 գ/լ K₂CO₃ կոնցենտրացիայով էլեկտրոլիտից, 10 Ա/դմ² հոսանքի խտությամբ, 45±1°C ջերմաստիճանում նստեցնում են 10-20 մկմ հաստության արծաթե ենթաշերտ:

Բարձրացվում է անոդի կոռոզիայի հանդեպ կայունությունը եւ նվազում է կոնտակտային դիմադրությունը:

(51) 7 C25B 11/10 (11) 1547 (13) A2
(21) P20030157 (22) 18.12.2003
(42) 11.05.2004
(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(72) Մարտին Մարտիրոսյան (AM), Լազար Սարգսյան (AM)
(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Տիտանե հիմքով կոմպոզիցիոն չլուծվող անոդի ստացման եղանակ

(57) Ըստ եղանակի էլեկտրոդի վրա նստեցնում են արծաթե ենթաշերտով մանգանի երկօքսիդի ֆազային շերտ եւ կապարե երկօքսիդի շերտ: Կապարե երկօքսիդի շերտի վրա էլեկտրոլիտային եղանակով 140գ/լ H₂SO₄, 25գ/լ Mn SO₂ կոնցենտրացիայով էլեկտրոլիտից, 5,5Ա/դմ² հոսանքի խտությամբ, 30±1°C ջերմաստիճանում նստեցնում են 75-100մկմ հաստությամբ մանգանի երկօքսիդի ֆազային շերտ:

Բարձրացվում է անոդային պոտենցիալի կայունությունը հոսանքի բարձր խտությունների պայմաններում:

(51) 7 E02B 3/02 (11) 1548 (13) A2
(21) P20030083 (22) 03.07.2003
(42) 11.12.2003
(71) Հենրիկ Մխիթարյան (AM), Հրանտ Մխիթարյան (AM), Կարեն Մխիթարյան (AM), Արամ Մելքոնյան (AM)
(72) Հենրիկ Մխիթարյան (AM), Հրանտ Մխիթարյան (AM), Կարեն Մխիթարյան (AM), Արամ Մելքոնյան (AM)
(73) Հենրիկ Մխիթարյան, Երեւան, Աջափնյակ, Սիլիկյան թաղ., 7-րդ փող., 23 (AM), Հրանտ Մխիթարյան, Երեւան, Աջափնյակ, Սիլիկյան թաղ., 7-րդ փող. 23 (AM), Կարեն Մխիթարյան, Երեւան, Աջափնյակ, Սիլիկյան թաղ., 7-րդ փող. 23 (AM), Արամ Մելքոնյան, Երեւան, Աջափնյակ, Սիլիկյան թաղ., 7-րդ փող. 23 (AM)
(54) Տարբեր գետերը մի հոսքի մեջ հավաքման համակարգ
(57) Գյուտը վերաբերում է հիդրոտեխնիկայի բնագավառին:

Համակարգն ունի տարբեր մակարդակների վրա գտնվող գետերի ջրամբարներն իրար միացնելու միջոցներ, որոնք իրականացված են բարձրից դեպի ցածր մակարդակ տեղակայված առանձին սիֆոնային խողովակագծերի ձեւով: Յուրաքանչյուր խողովակագիծն ունի

ջրի մուտքի եւ ելքի փականներ, մինչեւ ջրի մուտքի փականը եւ ջրի ելքի փականից հետո տեղակայված օդի արտաթողման փականներ, ինչպես նաեւ խողովակագծի վերին մասում տեղակայված օդի արտաթողման փական: Համակարգը հնարավորություն է տալիս ջրահավաքն իրականացնել անկախ գրունտի առանձնահատկություններից, 2 նկ.:

(51) 7 E02B 11/00 (11) 1549 (13) A2
(21) P20020185 (22) 11.11.2002
(42) 17.02.2003
(71) Արսենտի Բոգդանով (RU)
(72) Արսենտի Բոգդանով (RU)
(73) Արսենտի Բոգդանով, ՌԴ, ք. Ռյազան, Էնգելսի 3, բն. 5 (RU)
(54) Ցամաքուրդային խողովակ
(57) Գյուղը վերաբերում է հիդրոտեխնիկական կառուցվածքներին, մասնավորապես՝ գյուղատնտեսական հողերի ցամաքուրդներին:
Ցամաքուրդային խողովակն ունի գրունտով ծածկված ցամաքուրդային գիծ, որը կազմված է կողերով հիմքին հենված վաքերից: Վաքերի կողերի եւ հիմքի մակերեւույթի կցվանքով կատարված են ջրընդունիչ անցքեր, որոնք իրականացված են վաքերի կողերի եզրերի ծակատունով կամ հիմքի մակերեւույթի վրա խորացումներով: Ցամաքուրդային գիծն ունի զտիչ, որն իրենից ներկայացնում է ջրընդունիչ անցքերի հատվածամասերում զտող նյութի շերտ:
Բարձրացվում է ցամաքուրդային համակարգի արդյունավետությունը, 3 նկ.:

(51) 7 E04C 1/08 (11) 1550 (13) A2
E04B 2/02
E04B 2/14
(21) P20030107 (22) 18.09.2003
(42) 11.02.2004

(71) Յուրի Սաֆարյան (AM), «Երեւանի ճարտարապետության եւ շինարարություն պետական համալսարան» պետական ոչ առետրային կազմակերպություն (AM)

(72) Ալբերտ Սարգսյան (AM), Արմեն Սարգսյան (AM)

(73) Յուրի Սաֆարյան, Երեւան, Սայաթ-Նովայի 18, բն.63 (AM), «Երեւանի ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարան» պետական ոչ առետրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Որմնաբլուկ (տարբերակներ) եւ դրանցով շարվածքի իրականացման եղանակ

(57) Որմնաբլուկն անկողնակային մակերեւույթների միջեւ ունի ուղղաձիգ ոչ միջանցիկ խռոչներ, ճակատային նիստերի վրա փորվածքներ, ինչպես նաեւ բլուկի եզրերում ստորին անկողնակի վրա արված երկու երկայնական ելուններ:

Որմնաբլուկի արտաքին մակերեւույթի վրա խարիսխներով ամրացված է երեսպատման սալիկ, որի բարձրությունը 2-3 մմ-ով կարճ է որմնաբլուկի բարձրությունից, իսկ երկայնական եզրերին կան եզրահատքեր: Ըստ երկրորդ տարբերակի, երեսպատման սալիկը խարիսխներով ամրացված է որմնաբլուկի արտաքին ուղղաձիգ մակերեւույթից 18- 20մմ հեռավորության վրա եւ դրա բարձրությունը եւ երկարությունը 3-10 մմ-ով կարճ են որմնաբլուկի բարձրությունից եւ երկարությունից: Որմնաբլուկների ուղղաձիգ ոչ միջանցիկ խռոչները պատված են ալյումինե փայլաթիթեղով կամ փոշիով:

Որմնաձիգի իրականացման համար որմնաբլուկները շարում են չոր ձեւով, հպում են ճակատային նիստերը այնպես, որ որմնաձիգ եւ հորիզոնական կարերը սահմանափակվեն ելուններով, ընդ որում յուրաքանչյուր շարքը շարելուց հետո բոլոր ուղղաձիգ կարերը լցնում են հեղուկ շաղախով:

Բարձրանում են բլուկների ջերմամեկուսիչ հատկությունները: Ապահովվում է որմնաձիգ ամրությունը եւ սեյսմակայունությունը, 3 անկախ կետ, 7 նկ.:

(51) 7 F03B 17/02 (11) 1551 (13) A2
 (21) P20040023 (22) 12.02.2004
 (42) 11.05.2004
 (71) Կարեն Գրիգորյան (AM)
 (72) Կարեն Գրիգորյան (AM)
 (73) Կարեն Գրիգորյան, Երևան, Ա. Խաչատրյան
 23/9 (AM)
 (54) Պնեւմահիդրավիկական շարժիչ
 (57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը
 եւ կարող է կիրառվել տարբեր մեխանիզմների
 շարժաբեւեռներում:

Պնեւմահիդրավիկական շարժիչն ունի լիսեռ՝
 իր առանցքային ուղիներով, դրանց շառավղային
 ուղիների միջոցով միակցված առաձգական նյութից
 պատրաստված հերմետիկ պնեւմատիկներ, ընդ
 որում լիսեռի առանցքային ուղիները օդաբաշխիչ
 հանգույցի միջոցով հաղորդակցում են մթնոլորտի
 եւ ճնշման աղբյուրի հետ: Չամաձայն գյուտի լի-
 սեռը եւ պնեւմատիկները տեղակայված են աշ-
 խատանքային հեղուկով լցված իրանի մեջ, որի
 ներքին մակերեսային համառանցք է լիսեռին,
 լիսեռի վրա անշարժ ամրակցված են լիսեռին
 ուղղահայաց երկայնական անցքերով բազուկներ,
 որոնց քանակը համապատասխանում է լիսեռի
 առանցքային ուղիների քանակին:

Բարձրացվում է շարժիչի զարգացող ոլորտը
 մոմենտը եւ ՕԳԳ-ն, 3 նկ.:

(51) 7 G01C 17/00 (11) 1552 (13) A2
 (21) P20030155 (22) 16.12.2003
 (42) 11.03.2004
 (71) «Հայաստանի պետական ճարտարագիտական
 համալսարան» պետական ոչ առևտրային կազմա-
 կերպություն (AM)
 (72) Անդրանիկ Յովհաննիսյան (AM), Սուրեն
 Ղեւոնդյան (AM), Վահրամ Մարտինյան (AM)
 (73) «Հայաստանի պետական ճարտարագիտական
 համալսարան» պետական ոչ առևտրային կազմա-
 կերպություն, Երևան, Տեղյան 105 (AM)
 (54) Էլեկտրամագնիսական կողմնացույց
 (57) Կողմնացույցն ունի մագնիսազգայուն

տարր եւ կառավարման փաթույթ: Որպես մագ-
 նիսազգայուն տարր օգտագործված է հերկոն:
 Այն տեղակայված է հաստատուն լարման աղբ-
 յուրից սնվող կառավարման փաթույթում, որին
 հաջորդաբար միացված են ամպերաչափ եւ
 ռեոստատ: Չերկոնը հաջորդաբար միացված
 է ազդանշանային լամպի հետ, եւ այս շղթան
 նույնպես միացված է հաստատուն լարման
 աղբյուրին: Երկրի մագնիսական դաշտի լարվա-
 ծության հորիզոնական եւ ուղղաձիգ բաղա-
 դրիչների ուղղությունը որոշելու համար հերկոն-
 կառավարման փաթույթ համակարգի առանցքը
 կողմնորոշում են համապատասխանաբար
 հորիզոնական կամ ուղղաձիգ հարթության մեջ
 եւ սնման լարման տարբեր բեւեռականության
 դեպքում չափում հերկոնի գործարկման կամ
 գործադարի հոսանքը:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը, 1 նկ.:

(51) 7 G01R 17/10 (11) 1553 (13) A2
 (21) P20040007 (22) 20.01.2004
 (42) 12.04.2004
 (71) Բորիս Մամիկոնյան (AM), Խորեն Մամի-
 կոնյան (AM)
 (72) Բորիս Մամիկոնյան (AM), Խորեն Մամի-
 կոնյան (AM)
 (73) Բորիս Մամիկոնյան, Գյումրի, Ն.Շնորհալու
 25, բն.24 (AM), Խորեն Մամիկոնյան, Գյումրի,
 Ն.Շնորհալու 25, բն.24 (AM)
 (54) Դիմադրության աճի չափիչ
 (57) Չափիչն ունի կայունացված հաստատուն
 հոսանքի աղբյուր, հաստատուն լարման
 ցուցասարք, հենանիշային եւ բեռնվածքի
 ռեզիստորներ, լարման կրկնիչի սխեմայով
 միացված հաստատուն հոսանքի ուժեղարար:
 Ուժեղարարի մուտքային սեղմակին միացված
 է հոսանքի աղբյուրի առաջին սեղմակը, իսկ
 ելքային սեղմակին միացված է բեռնվածքի
 ռեզիստորի առաջին սեղմակը: Չենանիշային
 ռեզիստորի առաջին սեղմակը միացված է
 ուժեղարարի մուտքային սեղմակին, հենա-

նիշային եւ բեռնվածքի ռեզիստորների երկրորդ սեղմակները միացված են դիֆերենցիալ դիմադրական առաջնային կերպափոխիչի (ԴԴԱԿ) միջին սեղմակին: Կերպափոխիչն իր հոսանքային սեղմակներով միացված է հոսանքի աղբյուրի երկրորդ եւ չափիչի հողանցման սեղմակներին, իսկ պոտենցիալային սեղմակներով միացված է ցուցասարքին: ԴԴԱԿ-ի թելերից մեկը հանդիսանում է համեմատման ռեզիստոր: Հեմանիշային եւ բեռնվածքի ռեզիստորների դիմադրություններն ընտրվում են իրար հավասար, հետեւաբար դրանցով հոսող հոսանքները միշտ իրար հավասար են: ԴԴԱԿ-ի երկու կեսերով հոսում է միեւնույն չափիչ հոսանքը՝ առաջացնելով դրանց վրա լարման անկումներ: Դրանց տարբերությունը հանդիսանում է չափիչի ելքային լարումը, որը տրվում է ցուցասարքին:

Ընդլայնվում են դիմադրության աճի չափիչի կիրառության ոլորտները, 1 նկ.:

-
- | | | |
|---|-----------------|---------|
| (51) 7 G06G 7/26 | (11) 1554 | (13) A2 |
| (21) P20040042 | (22) 29.03.2004 | |
| (42) 11.06.2004 | | |
| (71) Վարդան Ալեքսանյան (AM), Դավիթ Շաղգամյան (AM) | | |
| (72) Վարդան Ալեքսանյան (AM), Դավիթ Շաղգամյան (AM) | | |
| (73) Վարդան Ալեքսանյան, Երեւան, Դրոյի 14/1, բն.16 (AM), Դավիթ Շաղգամյան, Երեւան, Քաջազնունու 10, բն.4 (AM) | | |
| (54) Ոչ գծային անալոգաթվանշանային կերպափոխիչ | | |
| (57) Գյուտը վերաբերում է չափիչ եւ հաշվողական տեխնիկայի բնագավառներին եւ կարող է օգտագործվել ոչ գծային օրենքով տրված անալոգային ազդանշանը համարժեքթվանշանային կոդի կերպափոխելու համար: | | |

Կերպափոխիչն ունի երկտակտ ինտեգրման սկզբունքով կառուցված գծային անալոգաթվանշանային կերպափոխիչ, որի հեմանիշային լարման մուտքը միացված է լարման

բաժանարարի հեմանիշային ռեզիստորին ու մուլտիպլեքսորի ելքին, որի տեղեկատվական մուտքերը լարման բաժանարարի ճյուղային ռեզիստորների միջոցով միացված են լարման աղբյուրի ելքին, իսկ կառավարման մուտքերը՝ անալոգաթվանշանային կերպափոխիչի ելքային կոդի բարձր կարգերին:

Ոչ գծային անալոգաթվանշանային կերպափոխման հիմքում ընկած է կերպափոխման ֆունկցիայի մոտարկումը բեկյալով: Մոտարկումն իրականացվում է հաստատուն քայլով՝ ըստ ելքային կոդի:

Պարզեցվում է կերպափոխիչի սխեման, բարձրացվում է աշխատանքի ճշգրտությունը, 2 նկ.:

-
- | | | |
|---|-----------------|---------|
| (51) 7 G06K 7/08 | (11) 1555 | (13) A2 |
| (21) P20040024 | (22) 17.02.2004 | |
| (42) 11.05.2004 | | |
| (71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM) | | |
| (72) Վարուժան Հակոբյան (AM) | | |
| (73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM) | | |
| (54) Երկձեւ պիեզոէլեկտրական կառուցվածքներում տեղեկատվության վերարտադրման եղանակ | | |
| (57) Գյուտը վերաբերում է հաշվողական տեխնիկային ու ավտոմատիկային եւ կարող է կիրառվել պիեզոէլեկտրոնային կառավարման համակարգերում: | | |

Երկձեւ պիեզոկառուցվածքներում ենթաէլեկտրոդային տիրույթների մնացորդային բեւեռացման աստիճանի փոփոխմամբ գրանցված տեղեկատվության վերարտադրման եղանակի համաձայն գրգռում են քվադրոբեզոնանսային տատանումներ, բացահայտում վերարտադրման ազդանշանների պիեզոկառուցվածքի տիրույթների բեւեռացման վեկտորը, ձեւավորում

վերարտադրման հայտանիշն ու տակտային ազդանշանները, պիեզոկերպափոխված վերարտադրման ազդանշանների ու հենանիշային լարման մակարդակները: Վերարտադրման ազդանշանի ու հենանիշային լարման մակարդակների համեմատմամբ ամպլիտուդային հայտանիշով որոշում են վերարտադրման երկուական կողը: Հենանիշային լարման հետ միաժամանակ վերարտադրման հայտանիշի ազդանշանով ձեւավորում են իրար նկատմամբ դիսկրետ քվանտացված փուլերով շեղված ազդանշաններ, դրանց փուլաժամանակային զտմամբ, նույնանուն քաշային խմբերի ազդանշանների ժամանակաինպուլսային հաջորդականությունների գոյացմամբ եւ տրամաբանական կերպափոխմամբ առաջացնում են հենանիշային լարման հետ սինքրոնացված դինամիկական հաշվարկման համակարգ, որից հետո հենանիշային լարումով կատարում վերարտադրման ազդանշանների ամպլիտուդային զտում: Վերարտադրման երկուական կողը որոշում են կոդաժամանակային զտման միջոցով՝ ելնելով դինամիկական հաշվարկման համակարգի վիճակից:

Բարձրացվում է տեղեկատվության վերարտադրման ճշգրտությունն ու արագագործությունը, 3 նկ.:

-
- (51) 7 H01H 33/02 (11) 1556 (13) A2
 (21) P20040003 (22) 14.01.2004
 (42) 12.04.2004
 (71) Սպարտակ Խաչատրյան (AM)
 (72) Սպարտակ Խաչատրյան (AM)
 (73) Սպարտակ Խաչատրյան, Երեւան, Մաշտոցի 51, բն.7
 (54) Բարձր լարման բեռնվածքի անջատիչ

(57) Բարձր լարման բեռնվածքի անջատիչն ունի կրող կառուցվածքի վրա տեղադրված երկու հիմնային մեկուսիչ, որոնցից յուրաքանչյուրին ամրակցված է գլանաձեւ հատվածք ունեցող աղեղնարիչ խցիկ եւ շարժուն հպակ: Շարժուն հպակը գլանաձեւ ձող է, որի մեկ ծայրը եւ մյուս ծայրին մոտ մեկ հատվածը մեկուսիչներ են:

Պարզեցվում է անջատիչի կառուցվածքը, 2նկ.:

-
- (51) 7 H01Q 19/17 (11) 1557 (13) A2
 H01Q 3/18
 H01Q 25/00
 (21) P20030116 (22) 13.03.2001
 (85) 13.10.2003
 (86) PCT/AM01/0007, 13.03.2001
 (87) WO02/073739 A1, 19.09.2002
 (42) 11.02.2004
 (71) Սուրեն Գերունի (AM)
 (72) Սուրեն Գերունի (AM)
 (73) Սուրեն Գերունի, Երեւան, Լենինգրադյան 8, բն. 69 (AM)
 (54) Բազմաճառագայթ սֆերիկ անտենային համակարգ սեւեռված միկրոալիքային անհաղորդալար
 (57) Անտենային համակարգն ունի երկու ազիմուտալ եւ ո հատ անկյունատեղային համակենտրոն ուղղորդիչներ: Անկյունատեղային համակենտրոն ուղղորդիչների վրա տեղափոխման եւ սեւեռման հնարավորությամբ տեղադրված են ճառագայթիչներ: Մեկ հայելին կարող է ապահովել տարածության բազմաճառագայթային տեսածիրը 120° անկյան սեկտորում ըստ ազիմուտի եւ 30° ըստ տեղի անկյունի:

Պարզեցվում է կառուցվածքը, 3նկ.:

**ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ**

**Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական
տվյալների նույնականացման միջազգային
կոդերը ըստ ՄՄԿ ST.9 ստանդարտի**

- 11 արտոնագրի համարը
13 փաստաթղթի տեսակի կոդը
Ս օգտակար մոդելի արտոնագիր
21 հայտի համարը
22 հայտի ներկայացման թվականը
23 լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
31 առաջնային հայտի համարը
32 առաջնային հայտի ներկայացման թվականը
33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
45 օգտակար մոդելի արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51 միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչ(ները)
54 օգտակար մոդելի անվանումը
56 տեղեկատվության աղբյուրներ
57 ռեֆերատը
62 ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
71 հայտատուն, երկրի կոդը
72 օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73 արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74 արտոնագրային հավատարմատար
85 միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86 միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87 միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը
-

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 7 A47B 27/00 (11) 76 (13) U
(21) U20040116 (22) 05.10.2004
(71) Հենրիկ Բարսեղյան(AM), Արայիկ Պողոսյան (AM)
(72) Հենրիկ Բարսեղյան (AM), Գուրգեն Խուրդյան (AM), Կարեն Աճեմյան (AM), Արայիկ Պողոսյան (AM)
(73) Հենրիկ Բարսեղյան, Երեւան, Գարեգին Նժդեհի 30/3,բն. 31 (AM), Արայիկ Պողոսյան, Երեւան, Ռոստոմյան 36 (AM)
(54) Գծագրանկարչական սեղան
(57) Օգտակար մոդելը վերաբերում է մեքենա-
շինական տեխնիկական միջոցներին, մաս-
նավորապես՝ գծագրական սեղաններին եւ
հաստոցներին: Սեղանն ունի հենատուքերին տե-
ղակայված ուղղաձիգ սնամեջ կանգնակ, դրա
մեջ առանցքային ուղղությամբ տեղաշարժման եւ
տարբեր դիրքերում սեւեռման հնարավորությամբ
տեղադրված հենաձող, մետաղաթերթ եւ դրան
ամրակցված տախտակ: Հենաձողի վերելում
համառանցքորեն տեղադրված է հենակալ՝
դրան ամրակցված գնդով: Գունդն ընդգրկվում է
երկու՝ անշարժ եւ շարժուն կեսերից բաղկացած
գնդային զսպախցուկով: Չսպախցուկի երկու
կեսերն իրենց վերին ծայրերով միացված են
մետաղաթերթին:

Ապահովվում է ցանկացած դիրքում տախ-
տակի դիրքավորումն ու սեւեռումը, 2 նկ.:

(51) 7 B01F 3/04 (11) 77 (13) U
A23L 2/54
(21) U20040089 (22) 18.12.2002
(85) 19.07.2004
(86) PCT/RU02/00536, 18.12.2002
(87) WO 03/052046 26.06.2003

(31) 2002115394 (32) 17.06.2002 (33) RU
2001133876 19.12.2001 RU
(71) Անատոլի Կուտեւ(RU)
(72) Անատոլի Կուտեւ(RU)
(73) Անատոլի Կուտեւ(RU)
(54) Թթվածնային կոկտեյլի պատրաստման
անհատական միջոց եւ դրա գազի բալոնը
(57) Օգտակար մոդելը վերաբերում է սննդային
արդյունաբերությանը:

Թթվածնային կոկտեյլի պատրաստման
անհատական միջոցն ունի դեպի վերին մասը
նեղացում ունեցող հեղուկով տարողություն եւ
ճնշման տակ գտնվող թթվածնով գազի բալոն,
որն ունի փոշարարի տեսքով կատարված
ծայրոցի հետ հաղորդակցված թողարկիչ
փական: Թողարկիչ փականը հաղորդակցված է
փոշարարի հետ ճկափողի կամ կոշտ խողովակի
միջոցով, որոնք հնարավորություն են տալիս
տեղակայել փոշարարը հեղուկով տարողության
հատակային մասում:

Գազի բալոնի տարողությունը պատ-
րաստված է 0,1-0,83 մմ հաստություն ունեցող
ալյումինե կամ երկաթե թիթեղից, իսկ թողարկիչ
փականը կատարված է մինչեւ 35 մթն գազի
ներքին ճնշման դիմանալու հնարավորությամբ:
Գազի բալոնում թթվածնի ճնշման ընդրկույթն է՝
2-30 մթն, իսկ քանակը՝ 0,1-90 լ: Գերադասելի է,
որ բալոնն ունենա 330 մլ ծավալ, թթվածինը դրա
մեջ լինի 18 մթն ճնշմանը տակ, 6լ քանակով եւ
հեղուկի մեջ ներթողված լինի մինչեւ 1,5 լ/րոպե
արագությամբ:

Հեղուկի մեջ կարող են առկա լինել ձվի
սպիտակուց, դեղաբույսերի թուրմ կամ հյութ:

Պարզեցվում է կառուցվածքը, բարձրացվում
է օգտագործման հարմարավետությունը,
ապահովվում է անվտանգությունը շահագործման
ընթացքում, 2 նկ.:

(74) Ա. Գալոյան

(51) 7 B30B 11/06 (11) 78 (13) U
 (21) U20040083 (22) 06.07.2004
 (71) Մանուկ Մարգարյան(AM)
 (72) Մանուկ Մարգարյան(AM), Արման Մարգարյան(AM)
 (73) Մանուկ Մարգարյան, Երեւան, Վահր. Փափազյան, 2-րդ նրբ., 133(AM)
 (54) Սուրճի փոշու մամլման սարք
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է սորուն նյութերի մամլման սարքերին եւ կարող է կիրառվել սուրճի փոշուց եւ շաքարավազից բաժնավորված հաբեր ստանալու համար:

Սարքն ունի անշարժ մամլամայր եւ առանցքային ուղղությամբ հետադարձ-առաջընթաց շարժման հնարավորությամբ տեղադրված մամլամատ: Լայնական հատվածում մամլամայրի խոռոչում մամլատը էլիպսաձեւ են, մամլամայրի խոռոչի էլիպսի առանցքների չափերը փոքրանում են դեպի խոռոչի հիմքը, խոռոչի ուղղահայաց հատվածները կիսաշրջանաձեւ են, դրանց շառավիղները փոքրանում են մեջտեղից դեպի էլիպսի մեծ առանցքի ծայրերը, իսկ մամլամատի աշխատանքային մակերեսույթն ունի էլիպսի մեծ առանցքի ուղղությամբ ելուստ:

Ստանում են սուրճի հատիկի ձեւ ունեցող հաբեր, 2 նկ.:

(51) 7 B65D 1/02 (11) 79 (13) U
 (21) U20040063 (22) 25.05.2004
 (71) ՕՕՕ «Պիվոլարնյա Յեյնեքեն» (RU)
 (72) Վիկտոր Պյատկո (RU)
 (73) ՕՕՕ «Պիվոլարնյա Յեյնեքեն» (RU)
 (54) Շիշ
 (57) Շիշն ունի դեպի թեք ուսերը լայնացող պսակով կոնաձեւ վզիկ եւ գլանաձեւ իրան, որը լծորդված է հատակի հետ: Վզիկից դեպի ուսեր եւ ուսերից դեպի իրան անցնելու մասերը կատարված են շառավիղներով: Շիշ գաբա-

րիտային բարձրության հարաբերությունը իրանի առավելագույն տրամագծին եւ վզիկի բարձրությունը բավարարում են համապատասխան պայմաններին:

Պահպանելով անոթի դիմացկունությունը, ընդլայնվում է ընպելիքների շշալցման համար նախատեսված տեխնիկական միջոցների տեսակաշարը, 2 նկ.:

(74) Ա. Գալոյան

(51) 7 B67C 3/06 (11) 80 (13) U
 (21) U20040087 (22) 19.07.2004
 (31) 2003122463 (32) 25.07.2003 (33) RU
 (71) Անատոլի Կուտեւ(RU)
 (72) Անատոլի Կուտեւ(RU)
 (73) Անատոլի Կուտեւ(RU)
 (54) Թթվածնով գազավորված ընպելիքի ռեզերվուար
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ թթվածնով գազավորված ընպելիքներով ռեզերվուարներին:

Հերմետիկ փակված ռեզերվուարը, որտեղ լցված է թթվածնով հագեցված հեղուկ եւ դրա վրա գտնվող թթվածին, պատրաստված է կամ պլաստմասսայից, կամ մետաղից, կամ ապակուց: Ռեզերվուարի պատերի հաստությունը սահմանված է ոչ ավելի, քան 7,0 մմ թթվածնի ներքին ճնշմամբ: Հեղուկի մեջ գտնվող թթվածնի քանակը սահմանված է 5-200 մգ/լ միջակայքում՝ 1,05-7,10 մմ ճնշման տակ եւ 0,5 – 37,5°C աստիճանում հեղուկի մեջ թթվածնի մատուցմամբ: Ապահովվում է ռեզերվուարում առանց հատկությունների վատացման տարբեր ընպելիքների պահպանման հնարավորությունը, բացառվում է ռեզերվուարի քայքայման վտանգը, 1 նկ.:

(74) Ա. Գալոյան


ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՆՄՈՒՇՆԵՐ

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՄՀԿ ST.80 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը
	<i>S` արդյունաբերական նմուշի արտոնագրի ծածկագիրը</i>
21	հայտի համարը
22	հայտի ստացման թվականը
23	առաջնության թվականը ըստ լրացուցիչ նյութերի
24	թվականը, որից սկսվում է ՀՀ արտոնագրով վերապահված իրավունքների գործողությունը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնային հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
51	արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը(ները)
54	արդյունաբերական նմուշի անվանումը
55	արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)
57	էական հատկանիշների ամբողջությունը
71	հայտատուն(ները), երկրի կոդը
72	հեղինակը(ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը(երը), հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար


Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 09-03 (11) 88 (13) S
 (21) D20030012 (22) 13.11.2003
 (31) 29/181602 (32) 13.05.2003 (33) US
 29/183686 16.06.2003 US
 (71) Ուորներ – Լամբերթ Քամփնի ԼԼՔ (US)
 (72) Գրանտ Բրեդֆորդ (US)
 (73) Ուորներ – Լամբերթ Քամփնի ԼԼՔ (US)
 (74) Ջ. Դավթյան
 (54) Բաշխիչ սարք
 (55)




(57) Բաշխիչ սարք, որը բնութագրվում է՝
 . երկու՝ վերելի եւ ներքելի մասերով,
 . ուռուցիկ հետելի կողմով եւ ալիքաձեւ առջելի կողմով, երկայնական կտրվածքում սեղանաձեւ վերելի մասով,
 . վերելի մասի առջելի, հետելի, վերելի տեղամասերը ներառող եզրագծերին զուգահեռ, ոչ մեծ խորությամբ փորվածքով՝ ներքելի տեղամասում սահունորեն անցնող առջելի եւ հետելի կողմերին,
 . վերելի մասի առջելի կողմի նկատմամբ ներս ընկած, գոգավոր առջելի կողմով եւ հետելի կողմի ներքելի մասի կորացումով քառանկյուն զուգահեռանիստի տեսք ունեցող ներքելի մասով,
 . գոգավոր առջելի կողմով քառանկյուն փոքր զուգահեռանիստի տեսք ունեցող շնիկի առկայությամբ ներքելի մասի առջելում:

(51) 09-03 (11) 89 (13) S
 (21) D20030013 (22) 13.11.2003
 (31) 29/181555 (32) 13.05.2003 (33) US
 (71) Ուորներ – Լամբերթ Քամփնի ԼԼՔ (US)
 (72) Գրանտ Բրեդֆորդ (US)
